ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Տալվորիկցիներ, հյուրեր, ավագանի: Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքը հաստատել է իր 2014 թվականի բյուջեն հետևյալ համամասնությամբ:

1. Եկամուտների գծով 18165.3 հազար դրամ.
2. Ծախսերի գծով 16956.3 հազար դրամ.
3. Բյուջեի դեֆիցիտ 1209.0 հազար դրամ.

Համայնքի գյուղապետարանը «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-45 հոդվածների համաձայն, 2014 թվականի հունվարի 1-ից մինչև Դեկտեմբերի 30 ընկած ժամանակահատվածում կատարվել է հետևյալ աշխատանքները՝

1. Գյուղապետարանի աշխատակիցների աշխատավարձի գծով պարտքեր չկան:

2. 2014թ. ընթացքում հողի հարկի 9700.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 10109.6 հազար դրամ, պլանը կատարվել է 104,2%-ով:

3.Գույքահարկի գծով 500.0 հազարի դիմաց հավաքագրվել է 730.3 հազար դրամ, պլանը

կատարվել է 146%-ով:

4. Հողի վարձի գծով 350.0 հազարի դիմաց հավաքագրվել է 560.6 հազար դրամ, պլանը կատարվել է 160%-ով:

5. Տեխնիկայի վարձի գծով 850.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 60.0 հազար դրամ, պլանը կատարվել է 7%-ով, որը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ 2014 թվականը անբարենպաստ է եղել ոռոգման ջրի պահով, որի հետևանքով վարձակալները չեն ստացել համապատասխան եկամուտ:
6. 2014 թվականի ընթացքում համայնքի հողի օտարումից ֆոնդային բյուջե մուտք է եղել
858.0 հազար դրամ, որի 530.0 հազար դրամը օգտագործվել է համայնքի խորքային

հորի (խմելաջուր) կապիտալ վերանորոգման համար, իսկ 20,0 հազար դրամ վճարվել է տեղական տուրք:

7. Համայնքի բնակիչներին հատկացվել է 190,0 հազար դրամ սոց. օգնություն:
2014 թվականի Դեկտեմբերի 30-ի դրությամբ Տալվորիկ համայնքում

սեփականաշնորհված է 1516,62 հա հողեր, վարձակալությամբ է տրված 34,85 հա 2014 թվականի ընթացքում հիմնվել է 8.5 հա պտուղ, 5 հա խաղող 2014 թվականին տնկվել է 49 հա ցորեն:

2014 թվականի Հունվարի 12-ի դրությամբ Տալվորիկ համայնքում ունենք 538.3 բազմամյա տնկարկներ, որից խաղողի այգի 278.3 հա, միջին բերքատվությունը 70 ցենտներ, իսկ պտղատու այգի 260.0 հա, որից բերքի տակ 227.5հա:

2014 թվականի ընթացքում կայացել է համայնքի ավագանու 11 նիստ, որից 7-ը արտահերթ:

Համայնքի բնակիչներից ստացվել է 19-ը դիմում և ժամանակին տրվել է համապատասխան պատասխաններ: Մտից գրությունների պատասխանները ժամանակին ուղղարկվել է համապատասխան մարմիններին:

Աշխատակազմի աշխատավարձերի աշխատանքի ներկայանալու հաճախականությունը նորմալ է, որը հավաստում է հաճախումների մատյանի ստորագրությունները:

Տալվորիկի գյուղապետարանը մշտական կապի մեջ է համայնքի բնակիչների և ավագանու անդամների հետ:

Տալվորիկ գյուղական համայնքի ղեկավար՝ Կ. Եղաթելյան